РОСГОССТРАХ

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ» անվանական կրթաթոշակ

Գիտելիքով զինված ուսանողին աջակցելը մեր ընկերության բիզնես-մշակույթի մի մասն է կազմում:

Հայաստանում մեր գործունեության առաջին իսկ տարվանից ապահովագրություն ուսումնասիրող ուսանողներից լավագույններին մենք շնորհում ենք «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ» անվանական կրթաթոշակ: Ընտրված ուսանողները տվյալ ուսումնական տարվա ընթացքում ստանում են 250 000 ՀՀ դրամ և հնարավորություն առաջնահերթության կարգով մասնակցելու Ընկերության կողմից իրականացվող տարբեր ծրագրերին, իրենց նախընտրելի մասնագիտական բաժիններում ստաժավորում անցնելու, ինչպես նաև մասնակցելու թափուր հաստիքների համար հայտարարված մրցույթներին:

Ո՞ր ԲՈՒՀ-երն են ներառված ծրագրում

- ԵՊՀ, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի բաժին
- ԵՊՀ, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
- ՀՊՏՀ, Ֆինանսական ֆակուլտետ
- ՀՖՀՀ, ֆինանսական ֆակուլտետ, բանկային գործ և ապահովագրության բաժին

Ո՞վ կարող է ստանալ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ» անվանական կրթաթոշակ

Կրթաթոշակին կարող են հավակնել վերը նշված ֆակուլտետների 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողները, ովքեր սովորում են բարձր առաջադիմությամբ և մեծ ցանկություն «Ռոսգոսստրախ-Արմենիա» ընկերությունում կառուցելու իրենց աշխատանքային կարիերան և զարգացնելու ապահովագրության ոլորտը Հայաստանում:

Ի՞նչ կտա Ձեզ մասնակցությունն այս մրցույթին

- ԲՈՒՀ-ում ձեռք բերված տեսական գիտելիքների ստուգելու հնարավորություն
- Հարցազրույցների/ խմբային, անհատական/ մասնակցելու և փորձ ձեռք բերելու հնարավորություն
- Աշխատանքային կարերիայի ընտրության մեջ կողմնորոշվելու հնարավորություն
- Ստացած գիտելիքները պրակտիկորեն կիրառելու հեռանկար
- ՌԳՍ-ի տարբեր բաժիններում՝ հատուկ մշակված ծրագրի շրջանակներում ստաժավորում անցնելու հնարավորություն
- Հնարավորություն կողք-կողքի աշխատելու Հայաստանի ամենախոշոր ապահովագրական ընկերության առաջատար մասնագետների հետ և ձեռք բերելու պրակտիկ փորձ
- Հնարավորություն ծանոթանալու ՌԳՍ-ի կորպորատիվ մշակույթին՝ հետագայում դրա մի մասը կազմելու հեռանկարով: Եվ իհարկե՝
- Ֆինանսական աջակցություն ամսական 25 000 ՀՀ դրամի չափով:

Ինչպե՞ս ներկայացնել կրթաթոշակ ստանալու դիմում-հայտ

Այցելե՛ք www.rgs.am/vacancies հղումով, մուտք գործեք «Ռոսգոսստրախ» անվանական կրթաթոշակ բաժին և

- Լրացրե՛ք Ձեր տվյալները և կցեք Ձեր CV-ին
- Կցե՛ք մոտիվացիոն նամակը (հակիրճ նկարագրեք թե որտեղի՞ց եք իմացել մրցույթի մասին, ինչո՞ւ եք որոշել մասնակցել մրցույթին, ի՞նչ հաջողություններ, ձեռքբերումներ եք ունեցել մինչ այժմ, ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր ապագան և այլն)
- Կցե՛ք փոքրիկ ակնարկ/շարադրությունը /эссе/ գրված ստորև թեմաներից որևէ մեկով. Այն չպետք է գերազանցի 1 էջը /800 սիմվոլ/:

Թեմաներ

- Ի՞նչը կապահովագրեիք առաջին հերթին
- Ապահովագրական անեկդոտներ
- Ապագայի ապահովագրական ընկերությունը
- Ազատ թեմա ապահովագրության մասին
- Ապահովագրական նորություններ
- «Ապահովագրություն» vs «Անվտանգության համակարգ»
- Հայաստանի ապահովագրական շուկան

Ընտրության փուլերը

- Դիմում-հայտերի դիտարկում
- Խմբային հարցազրույց
- Պրակտիկ առաջադրանքներ/թեստեր
- Անհատական հարցազրույց

Ոչ լիարժեք ներկայացված դիմումները չեն դիտարկվի:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 30/09/21

Մրցույթի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել /010/ 59-10-10: Եթե հեռախոսով խոսել չեք սիրում, ապա գրե՛ք Ձեր հարցը student@rgs.am հասցեին:

Եկե՛ք ծանոթանաք և բացահայտենք ձեր հնարավորությունները Ռոսգոսստրախում.

Մենք սպասում ենք ձեզ: Դիմե՛ք հենց հիմա՝ www.RGS.am